ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 10 հոկտեմբերի (ՏԱՍՍ-ի թղթակիցներ Ս. Սախնո, Ա. Կազնաչև)։ Քաղաքի կյանքն աստիճանաբար մտնում է բնականոն հուն։ Այսօր առավոտվանից գործում է հասարակական տրանսպորտը, բաց են խանութները, կենցաղի ծառայության ձեռնարկությունները։ Աշխատանքային գործունեության վերսկսման նշանները տեսանելի են ամենուրեք. ընթանում են բեռներով լի մեքենաներ, շինհրապարակներում սկսել են շարժվել աշտարակավոր կռունկները։ ՏԱՍՍ-ի թղթակիցները եղան մի շարք կոլեկտիվների աշխատատեղերում։

Քաղաքի 35-րդ թաղամասը այն շրջաններից մեկն է, որտեղ կառուցվում են բնակելի տներ, սոցիալ-կուլտուրական և կենցաղային այլ օբյեկտներ։ Այստեղ աշխատում է Ադրբեջանական ՍՍՀ շինմինի 9-րդ տրեստի կոլեկտիվը։

Այդ օրվան նախորդել էր կուսակցական կազմակերպության և ադմինիստրացիայի մեծ աշխատանքը։ Նրանց ներկայացուցիչները գնացել էին տները, զրուցել, մարդկանց համոզել դուրս գալ աշխատատեղեր։ Կարևոր փաստարկներից մեկն այն էր, որ բնակարանային պրոբլեմը հատկապես սուր է մարզի բնակիչների համար, և մեծապես շինարարներից է կախված դրա լուծումը։ Ճիշտ է, կոլեկտիվը կառույց է եկել դեռևս ոչ լրիվ կազմով՝ առայժմ 80 տոկոսով։ Բայց այստեղ ակընկալում են, որ արդեն վաղը մեծամասնության օրինակին կհետևեն նաև մյուսները։

Ղարմետաքսկոմբինատ։ Արդեն երրորդ օրն է, ինչ ձեռնարկության աշխատավորուհիները արտադրանք են տալիս։ Թողարկվել է մի քանի տասնյակ հազար մետր կոշտ գործվածք, որը մետաքսե գործվածքների պատրաստման հիմքն է։ Պլանաչափորեն արտադրությունն ավելացնելու համար նախատեսված է վերակառուցել ձեռնարկությունը։ Կյանքն ինքն է թելադրում դրա անհրաժեշտությունը։ Շատ մեքենաներ հնացել են, իսկ դա ոչ միայն կասեցնում է արտադրողականությունը, այլև խանգարում բարելավել աշխատապայմանները։ Արտադրության տեխնիկական վերահանդերձավորումը կօգնի վերացնելու այդ ցավոտ պրոբլեմը։ Այստեղ մեծ հույսեր են կապում նաև տնտեսավարման նոր պայմանների արմատավորման հետ։

Հերթափոխի են դուրս եկել նաև էլեկտրատեխնիկական գործարանի, կահույքի և կոշիկի ֆաբրիկաների, ուրիշ ձեռնարկությունների աշխատավորական կոլեկտիվները։ Վագոնները բեռնաթափվում են երկաթուղային կայարանում։

Այսպիսին է Ստեփանակերտի ներկա աշխատանքային օրվա խրոնիկան։ Բոլոր նախադրյալները կան քաղաքի բնականոն գործունեության համար։ Մարդկանց մի քանի հերթափոխով աշխատելու հնարավորություն տալու համար որոշում է ընդունվել հոկտեմբերի 11-ից կրճատել պարետային ժամի տևողությունը։ Այժմ այն կգործի միայն ժամը 24-ից մինչև առավոտյան ժամը 5-ը։

Սակայն դեռ վաղ է խոսել իրադրության լրիվ կարգավորման մասին։ Ցավոք, դեռևս բոլոր ձեռնարկությունները, հիմնարկները ու կառույցները չէ, որ ձեռնամուխ են եղել աշխատանքի, կան չաշխատող կոլեկտիվներ։ Կդառնա՞ արդյոք աշխատանքային ռիթմը յուրաքանչյուր օրվա կայուն նորմա՝ ցույց կտա ժամանակը։